

# ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ապահովագրության պայմանագիրը դադարում է.

- Գործողության ժամկետի ավարտի դեպքում,
- Ապահովագրողի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,
- Ապահովադրի կողմից ապահովագրավճարի (կամ նրա համապատասխան մասի) պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարման դեպքում,
- Ապահովադրի կամավոր կամ հարկադիր լուծարման, ինչպես նաև Արբիտրաժային կառավարչի կամ ժամանակավոր ադմինիստրացիայի նշանակման, վարկատուների հետ պայմանավորվածության ձեռք բերման, որևէ պետական մարմնի կողմից Ապահովադրի գործունեության վրա վերահսկողություն սահմանելու դեպքում,
- Ապահովագրողի լուծարման դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- Դատարանի որոշմամբ ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

2. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է, եթե նրա ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի առաջացման հնարավորությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից անկախ այլ հանգամանքների հետևանքով: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ստանալ ապահովագրավճարի մի մասը՝ համամասնորեն այն ժամանակի համար, որի ընթացքում գործել է ապահովագրությունը:

3. Ապահովագրողի պահանջով, եթե այդ պահանջը պայմանավորված է Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանների կամ ապահովագրության պայմանագրի պայմանների խախտմամբ, ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ դրա մասին Ապահովադրին տեղեկացնելով ենթադրյալ խզման ամսաթվից ոչ պակաս, քան 3 օր առաջ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այդ դեպքում Ապահովագրողը վերադարձնում է ապահովագրական վճարը պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ հանելով կրած ծախսերը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովադրի պահանջով ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարել՝ դրա մասին Ապահովագրողին տեղեկացնելով ենթադրյալ խզման ամսաթվից ոչ պակաս, քան 30 օր առաջ, եթե պայմանագրով այլ բան

նախատեսված չէ: Այդ դեպքում վճարված ապահովագրական վճարները ենթակա չեն վերադարձման Ապահովադրին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից ապահովագրության և/կամ ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման հետ, ապա վերջինս վերադարձնում է Ապահովադրին նրա կողմից վճարված ապահովագրական վճարներն ամբողջությամբ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: